

քանջիւրոցն. որով եւս քան զեւս յանկան փառք եւ պարժանք Հայկազնիցս առաջի օտարաց:

Հայս օրինակ անա Սրբազանն նաեւ յառաջս լինելութեան իւրոյ յեւշ մայրաքաղաք՝ գնացաւ ի տեսութիւն Վսեմափայլ Վօկորիտէ Պէյ Տեղակալ Իշխանի երկրիս, մեծաւ սիրով եւ յարգանքով ընկալաւ, եւ պատուեցաւ փոխադարձ ալցելութեամբ:

Նորին Սրբազնութիւնն բարեհաճեալ յայց ելանել նաեւ աշակերտեալ մանկանց Ազգային դպրոցի քաղաքիս՝ ի 29 յունուարի ի ներկայութեան իւրում կատարեցաւ Հանդէս վեցամսեայ Հարցաքննութեանն ի Հայկաբանութեան եւ յԱւստն լեզուի, յորոյ աւարտելն՝ զեղեցիկ ատենարանելով ի վերայ գիտութեան եւ առաքինութեան, արձակեաց զՀանդէսն քաջալերելով եւ օրհնելով զնոցաբարձու Իշխանսն եւ գնահատեցիւս դպրոցին եւ զամենայն Հանդիսականս:

Ըստ այսմ նաեւ յեւշ եւ ի Ռօման ներկայ գտանելով նորին Սրբազնութիւնն Հարցաքննութեան իւրաքանչիւր վարժարանացն, եւ յամենայն ուսմունս արժանապէս յառաջադէմ հանդիսացեալ աշակերտացն՝ մեծապէս զօնութեամբ լցին զսիրտ գորովագութ Սուրբ Հօրն:

Առաքելաշառիչ Սրբազանն յետ միջիարելոյ զժողովուրդ քաղաքիս իւրովն մեղրածորան բանից քարոզութեամբ եւ պէս պէս բարեկարգութեամբ զամիսս երկուս եւ կէս, ապա յ2/14, ապրիլի ամսոյս նովին պատուով եւ հանդիսիս ճանապարհորդեաց աստի ի Սուրբառ քաղաք Պուզովիւնայու ուրանօր նոյնպէս մեծաւ շքով եւ պատրաստութեամբ ընկալաւ երկ ի Համազգեաց մերոց, եւ երկ յամենայն կարգէ Պաշտօնից Կայսերական կառավարութեանն, ըստ հրամանին Արքունի հետեւելոյ ի յանձնարարութենէ Պ. Պրոքշէլի Աստուրիական Դեսպանին Պօլսոյ:

Տեա անցուցանելոյ Նորին Սրբազնութեան ի Սուրբառ գառութիւն իրեն հնգետասան, ապա ունի անդրէն դառնալ ընդ այս ի Ռօման եւ ի Պաքով, եւ փութալ ժամանել ի Կալաց, ի հիմնարկութիւն նորոգ շինելի Եկեղեցւոյն յանուն Ամենօրհնեալ Սուրբ Աստուածածնին:

Եւ անա զայստիկ ստոյգ տեղեկութիւն որդիապատկան վատանութեամբ իրեն Հօր հշմարտի եւ Ազգասիրի խոնարհամտութեամբ մատուցանելով ձեզ՝ Գերապատիւ Տէր, խնդրեմ ներողամիտ մարդասիրութեան ընդունիլ: Եւ երկ հաճոյ ինչ բռնիցի Տէրութեանդ սրբազրութեամբ եւ կամ համառօտելով ծանօթութիւն ինչ հաղորդել ի սոցանէ կամ ոչ՝ ազգասէր ընթերցողացդ *Աւետարանիկ Հայաստանաց*, այն ի կամս ողջամիտ դատողութեան ձերոյ մնայ ապաստան:

Իսկ եւ խոնարհեցուցեալ զգլուխ, եւ միանգամայն ընդ Պ. Ստեփանի Պաշտասնեան Ազնիւ սիրելոյն՝ մեծարանօք համբոյր մատուցանելով ձեզ եւ Գերապատիւ Տ. Տ. Սարգիս եւ Խորեն Վարդապետաց Ազգասէր Սուրբ Հարց մերոց՝ մնամ միշտ

Աստուածարեալ Սուրբ Հայրութեանդ

խորին երախտագիտութեամբ եւ ամենայն ակնածութեամբ բարեացապարտ եւ ամենախոնարհ ծառայ

ՅԱՐԱԹԻՒՆ Մ. ՅԱԿՈՎԷԱՆ

1858, Ապրիլ 7/19, ի Պօրլլան:

ԵԳԵՍԻՈՅ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ. — Գերապատիւ Իւրայել Վ. ին խնամօք՝ Եղեւիոյ մէջ Բրիտանական ազգային միարանեալ նոր ընկերութիւն մը հաստատուեալ է, որ եռանդուն ազգասիրութեամբ եւ զովելի միարանութեամբ Եղեւիոյ վարժարաններուն բարեկարգութեանն ու պայծառութեանը կը զբաղի:

ԳԵՐԶԱՆՅԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ. — Յարգոյ Թադէոս Մ. Ս. Բագրատունին Մասիս լրագրոյն ուղղած բերրին մէջ կատեւէ որ ուսումնասիրութեան սրայծառ արեգակը իր շառաւիղներովը

սկսեր է բաժանել մինչեւ Հայաստանի խորերը: Գերջան գաւառն ալ որ դարերէ ի վեր ազիտութեան խոր քնոյ մէջ կը ննջէր՝ սկսաւ սրտիկ, զովելի եռանդով մը վառուած իր կենսական օգտին դարձունել իր բոլոր ուշադրութիւնը, եւ անոնք որ կարդան ինչ բնեք կըսեն՝ հիմա իրենց գաւառները եռանց բանական դատարարական շնոյ ուզել մեծցնել: Գերջանցիք իրենց արժանապատիւ առաջնորդ Առաքել Վ. ին խնամոց ներքեւ վարժարան մը կառուցին, եւ ի նշան իրենց կրօնասիրութեանը՝ խարխալեալ եկեղեցիներն վերանորոգեցին:

ՍԱՄՍՈՆԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ. — Սամսոնի անգղիական հիւպատոսի բարգման մեծապատիւ Չաքարեան Տէր Սարգիս, Փափագեան Տէր Գրիգորի եւ քանի մը հայ պատուաւոր վաճառականաց հետ մեկտեղ ասկէջ մեջ եօրն ամիս առաջ զեղեցիկ դպրոց մը կառուցին ի կրթութիւն հայկազն մանկտուոյն: Չաքարեան Տէր Սարգիսն բրած ազգասիրական գործքերը եւ ունեցած փոյրն եւ խնամքը բէ եկեղեցւոյն եւ բէ դպրոցին սպաւառութեանը համար մեծ զովեստի է արժանաւոր:

ԲԱԲԵՐԳՈՒ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ. — Պօլսոյ մէջ գտնուող պատուաւոր Բաբերդցիք Յ. դուռուշի տասն հազար անդորրագիր տալէ տալով մեծ եռանդով կաշխատին դրամագլուխ մը պատրաստել՝ զոր պիտի գործածեն իրենց գաւառին Ս. Քրիստափոր անուամբ վանքին մէջ վարժարան մը բանալու, որ չորս կողմի զեղերեն ուսման յարմարութիւն ունեցող տղայքը պիտի առնուն ժողովն ու ընտիր վարժապետներու ձեռքը կըրկ տան: Յուսամք որ այս պատուաւոր հայրենասիրաց եռանդը զեղեցիկ պտուղներով պսակուի:

ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ՆՈՐԱՐԵՒԻՏ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Վանէն զբրած նամակ մը լուր կուտայ բէ Վարազայ դիմացը Հայկառան ըստած լեռը այս օրերս փորուելով Գաղիկ Արժրուհի Թագաւորին տունը զտնուեք է բնակազրի հնուրիւններով, եւ հիմա լեռը փորելը կշարունակուի վսեմափայլ կուսակալին հսկողութեամբ: Առ այժմ գտնուածներն են՝ արքունի զանին բնակը զարմանալի հնութեամբ, արձան մը որ ոսկեձող կկարծուի, եւ ուրիշ բաներ հետզհետէ ելլելու վրայ են: (ՄԱՍՆԱ)

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՄԷՋ ԵՐԳԵՆՈՒ ԳՈՐԾԱՅԵՒՈՒ ՎՐԱՅ.

Արդոյ Խմբագիր ՄԱՍՆԱՅ ԱՂԱՒՆՈՅ պատուական ամսագրին.

Իզմիր, 20 Ապրիլ 1858.

Արշալուսոյ 567 բիւն մէջ Երգեհոնի յորդորնէս ընդհանուր ազգայնոց ազգասիրական եռանդը զրգուելով աղաչեցին մեզի, որ ասանկ ընտիր առաջարկութիւն մը Ազգային միւս լրագրաց էջերուն մէջն ալ տեսնուի յաղագս ընդհանրական տարածման: Ասոր համար մենք ալ համարձակեցանք այս նամակը ձեզի յուղարկել, անկատար յուսալով որ պատուական Աղանուոյ բնակուն վրայ տեղ մը կը գտնէ յարգոյ ընթերցողաց տեսնուելու:

Կէս դարէ ի վեր է որ երբ Հայ մանկտին սկսաւ արբնալ եւ գիտութեան յոյսէն աչքերը խողովել, ամենուն բերնէն զբերէ կը լսուէր. « ինչ կըլլայ մենք ալ եկեղեցիներ Երգեհոն գործածենք փոխանակ ծննդայի: » Բայց ինչ օգուտ որ սրբօրից սարկիկ նման որ կը բռնուի եւ քիչ մը ատեն ծառերուն վրայ կենալով վերստին կաներեւութանայ՝ այս խօսքն ալ ասանկ կըսուէր, մէկ քանի վայրկեան խօսակցութեան նիւր ու առիթ կըլլար, ու ետքը վերստին կաներեւութանայ: Ասոր երէ պատճառը փնտռենք կը գտնեմք որ Միարան հաւանութեան սրտատրիւնն է: Երբեմն երբեմն զանազան գործերու մէջ ազգասէր ոգի մը կը բռնկի, կը բորբոքի, ամեն ջանք ի գործ կը դնէ, մէկը կը համոզէ, միւսը կը համոզէ, բայց ի զուր որ ինքը միակ է:

Ասանկ ալ քանի քանի Ազգասէր անձեր եղան ազգիս մէջ Երգեհոն հաստատուելու համար, քանի քանի անձեր այս բանս բաղձացին եւ տակաւին կը բաղձան, բայց ո՞վ անոնցմէ կըցաւ.